

դանացած, որ զայն վերացնէ հոգիացնէ այս անցաւոր թանձրութենէն: Աւարայրը առեր է, մեր կրօնքն ու հայրենեաց նուիրական խորհուրդն է: Եւ երբ տեսիլքի նման իմ հոգիս կանգ կ'առնէ Սիփան լեւանց կատարին, դու գեղեցիկը հովիտ օրհնեալ Աւարայր, քու բոլոր պերճանքով կը պարգուիս իմ աչքերուն ինչպէս Դրասխան Աստուծոյ առջեւ: Վաթսուն հազար ասպետներուդ սպիտակ բանակը միշտ հոտ է երկնքիդ կապոյտ ձեղուն տաճարին տակ «Նորահրաշ» երգելու: Քու ամէն մէկ դիւցազներուդ նշխարը մեր տաճարներուն հիմնաքարն է, ուր շինուած է կանթոյկէն երկնասլաց, Աստուծոյ շնորհներուն պէս լուսաւոր, վայելուչ, աստղերու պէս ցանուած սարեր, ձորեր, եւ Հայաստանդ գեղեցիկ չէ առանց այդ տաճարներուն: Իմ հոգիս, այսօր բոլոր ձեզ խորհող հայ հո-

գիններ կը լեցուին կրօնական, հայրենասիրական յուզումով: Վկաներու արիւնով շաղկաւ երկիր, այնքան անող զմայլանքով կը լեցնէս մեր պանդուխտ հոգիները որ յիշատակներդ, լեռներդ չեն բաւեր մեր սրտերուն խռովուած ալիքներն ամփոփելու: Եթէ օտարներն ունին տաճարներ եւ ազատ հրապարակներ, ուր քարէ արձան կը կանգնեն, մենք ունինք ձեր անշէջ կրակը մեր մէջ, մեր անխախտ հաւատքը ձեր մէջ, ու սրտերու արձանը յաւիտեանական է, անխլիւ է, անժամանակ է:

Դարերը գահալիւծ կը թաւալին, տառապանքները կը բարդուին, կենսքը կը ճնշէ, կը քանդուին սրբալայներ, քայց ոչ մէկ ամարկու բռնաւոր կարող է մեր սրտերէն եւ անուշդ ջնջել ով հայրենիքիս խորան, ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ԱՒԱՐԱՅՐ:

Հ. ՎԱՅԱՆ ԵՈՒԶԱՆԵՍԵԱՆ

ԱՄԲԻԲԻ ԵՐԳԸ

«ԾՈՎՈՒՆ ՀԱՒՔ Մ՝ ԿԱՐ»*

Ծովուն հաւք մ՝ կէր՝ անունն էր Արօր.
Վրդիկն էր երկն՝ սրբոյիկը սեւաւոր.
Կապեմ բէլաբէն՝ էրթամ հետ ինոր.
Էն իմ դարդ գիտի, ես էլ գէօ՝ ինոր:
Արն, եսր, արն, խըռով մի՛ թաւ,
Աստուրիս մալ՝ զի քե՛ն չի՛ թաւ:

Ծըծւերս կոզով էր՝ քեզ էլ ճամբեցի.
Կամերս սիւտըլաւ՝ ճամբադ աչքեցի.
Ինկայ թաղէթաղ՝ ախլէ մ՝ ճարեցի.
Տըլի քարաղէ մ՝ թղթիկ առիցի:
Սինամայ փիտուր կալամ արիցի՝
Աչիս արտըսուց թանաք արիցի.
Շողաղ մատներովս նստայ գրիցի.

Իմ սըլտի դարդեր դուքար արիցի.
Ըտամբէջ քաղաք էլայ ճամբիցի.
Ասի՝ «Եսր, արն, խոռով մի՛ կէնա,
Աստուրիս մալ՝ զի՛ քե՛ն չի՛ մընա:

Ըտամբէջ շինիս հն վեր՝ Սեւ-Ծովեաց,
Ճամբենիս բռնիս ի վեր՝ կարիքներաց,
Կարիս իմ ճամբեր ետեւ սարեաց.
Կարիքիս մենիմ՝ իր ճամբենեաց.
Բարով շոտ դառնաս վեր՝ քո տան-տեղաց,
Արն, եսր, արն, խըռով մի՛ մընա.
Աստուրիս մալ՝ մեզ էլ չի՛ մընա:

Բոտան հմ գրն՝ վեր՝ էնա դարին.
Աստուած աւերէ՛ր ըս տարան տարին.
Չեւա մէկ Շամամ՝ էօրէօխիկ նարին.
Ջըրիկ չհասաւ՝ Շամամ թոռմաւ,
Շամամ չը հասաւ՝ նարիկս խոռմաւ:
Արն, եսր, արն, խըռով մի՛ կէնա:
Աստուրիս մալ՝ մարգն չի՛ մընա:

* Վանեցի նորէրսին այս երգը թէն ծանօթ՝ բայց ոչ մէկտեղ իր ամբողջական մեւովը տպուած է: Ահա լեւակատարը: Զ.

1. Վարիանթ՝ Կաւի ծերերաց՝ կալամ կարիցի:

Էսօր ինչ օր ի, էսօր ուրբաթ ի.
Իմ հարող մեռնեմ՝ կարիք-կոչքարի:
Ածու մ'եմ ցանեմ՝ հըմէն դիքարի.
Իմ հարող մեռնեմ՝ քաղա Նուբարի.
Արե՛, հա՛ր, արե՛, խոռով մի՛ կենա,
Աստըւորիս մալ՝ մեզի չի՛ մընա:

Բանձրիկ սարե՛ր, ցածրացէ՛ք,
Գըռացող գետե՛ր, դադարէ՛ք,
Իմ կարիքի ճամբա՛նը մօ՛ւտ արէ՛ք.
Իմ կարիքը շո՛տ իր տեղը հասուցէ՛ք:
Արե՛, հա՛ր, արե՛, խոռով մի՛ կենա.
Աստըւորիս մալ՝ զի՛ քե՛ չի՛ մընա:

Ածու մ'եմ ցանեմ՝ հըմէն պատընջան,
Իմ հարող մեռնեմ, ձեռքերն ի մըրջսն.
Անչամ ախ արի՛ ախիրս շատացան.
Ասի՛ տամ քա՛նքով՝ շահքերը կը բանէր.
Տուե՛ր եմ լաքու՛ զարնէր կ'սպանէր.
Արե՛, հա՛ր, արե՛, խոռով մի՛ կենա.
Աստըւորիս մալ՝ մեզի չի՛ մընա:

Էս օր ինչ օր ի, էսօր շաքարի.
Իմ հարող մեռնեմ՝ մաղրէ շարքարի.
Ածու մ'եմ ցանեմ՝ հըմէն Նարիկի ի.
Իմ հարող մեռնեմ՝ աղիգ-մաղիգ ի.
Արե՛, հա՛ր, արե՛, խոռով մի՛ կենա,
Աստըւորիս մալ՝ զի՛ քե՛ չի՛ մընա:

Կարիք, էն ճամբան ինչ դո՛ւ կը քէլեմ՝
Քարը քաղած, աւազն ի մաղած.
Էն աղբիւրն ինչ դու լուր խմես՝
Պողը ոսկի՛ պողզալն ապիկի:
Արե՛, հա՛ր, արե՛, խոռով մի՛ կենա.
Աստըւորիս մալ՝ մարդո՛ւ չի՛ մընա:

Էսօր ինչ օր ի, էսօր կիրակի,
Իմ հարող մեռնեմ՝ սիրող կրակ ի.
Ածու մ'եմ ցանեմ՝ հըմէն սըխտոր ի,
Իմ հարող մեռնեմ՝ օրտիկը պըղտոր ի.
Արե՛, հա՛ր, արե՛, խոռով մի՛ կենա,
Աստըւորիս մալ՝ զի՛ քե՛ չի՛ մընա:

Կ'երթամ վաղայ Բերդ՝ ոտքերս չի՛ գայ հետ,
Դառնամ երթամ ետ՝ իմ հարը բերեմ հետ,
Կանչեմ «Եյար, արե՛», սարե՛ր լացուցեմ,
Կանչեմ «Ջանն, արե՛», քարե՛ր լացուցեմ,
Շատ կարիք-կոչքար՝ ճամբէն դարձուցեմ:
Արե՛, հա՛ր, արե՛, խոռով մի՛ կենա.
Աստըւորիս մալ՝ մարդո՛ւ չի՛ մընա...

*
**

ԵՂԱՆԱԿ՝ սրտառու, Թաւալուն, աղեղաւար:

ԲԱՌԻՐ. — Բէլարի՛ փոքրիկ առաջատանաւ: Աստոր՝
Արար-աշխարհ, տիեզերք, Զի՛ քե՛ ինձի քեզի: Կոպո՛ւ
ընտիր ընկոյզ, Ալիքի՛ նայեցայ, սպասեցի: Ախի՛
ստակ, Թարաքե՛ մ'՝ թերթ մը, Ախմա՛ սերամարգ:
Կալա՛մ զրէ՛, Դարգ՝ միշտ, ցաւ, Դափար՝ զրէ՛, հա-
ւաքածոյ, Վեր՝՝ վրայ: Կարիք՝ պանդուխտ: Բառա՛մ
բանջարանոց, սեխնոց, Շամա՛մ մեղրապու, քաղցր ու
հոտաւտ կլոր սեխ մը, Էօրեօխիկ՝ զրկի՛, Եար՝ սե-
րական: Բիթար՝ կանաչ պղպեղ, Բազա՛ ճաշար՝ նոր
բերք՝ նոր համ, Պառնճա՛մ լուիկ: Մրջա՛մ կարմիր
բուստ: Անյա՛մ ալեւա՛մ, Շա՛նք՝ առկուս: Լա՛ք՝ ծնողց:
Շարքար՝ օշորակ: Աղիգ-մաղիգ՝ ազնուական մեծերով,
Թանկագին: Քարը քաղած, առաջը մաղած՝ մաքրուած,
հարթուած:

Փարիզ

ՉԻԹՈՂՆԻ

Յորժամ Մարտին ամիսն գայ, Տէրն հրաման կու տայ հողոյն.
Դաղկունք, զարթիք ի խոր քնոյն, քանի՛ պառկիք ներքեւ հողոյն.
Զարթիք աշխարհն ծաղկեցուցէք, բիւրք ի բիւրոց անծիւ անհուն:

ԴԱԻԻԹ ՍԱԼԱՉՈՐՑԻ